

ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2017/11/04

ք. Երևան

«27» նոյեմբեր 2017թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Գ.Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Գևորգ Վաչագանի Գալստյանը, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է և վճարում, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, այսուհետ՝ «Աշխատանք»:

1.2. Աշխատանքը բաղկացած է.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության փոքր հզորության վերահաղորդիչ հեռուստակայաններում (ցանկը կցվում է) տեղակայված հեռահաղորդակցական խցիկների ներքին մոնտաժման էլեկտրական մալուխային տնտեսության կարգավորման աշխատանքներ:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում 2017թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 27-ը:

1.4. Աշխատանքը Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում հանձնման-ընդունման ակտով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Աշխատանքի համար պայմանագրային գին է սահմանվում երկու հարյուր տասներեք հազար ՀՀ դրամ:

2.2. Վճարումը կատարվում է կանխիկ՝ փաստացի կատարված աշխատանքի հանձնման-ընդունման ակտի հիման վրա, դրանց ստորագրումից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք գրավոր են և ստորագրված Կողմերի կողմից:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝

Կատարող՝

ք. Երևան, Կոմիտասի պողոտան 95

Ն.Ք 001773514

Յունիքային ԳՔԻՑ

տրված 05.09.2014թ., 023-ի կողմից

Հ/հ 24.10.2007/7400

Արագածոտնի մարզ, գ. Եղիպատրուշ

ՀՎՀՀ ՀՏԻՑ 808

16 փ., 2/1 տ.

ՀՄՀ 3309620638

Գլխավոր տնօրեն



Գ. Ալոյան

Գ. Գալստյան

